ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

ՀՐԱՄԱՆ

№ 182-Ա «28» 06 2022թ. ք.Երևան

ՏԻԳՐԱՆ ՊԱՐԳԵՎԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ (ԾԱԾԿԱԳԻՐ՝ 22-3-25.3-Ղ3-1) ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասով, 16-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1.1.-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 1554-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 147-րդ և 151-րդ կետերով և Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 441-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 14-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Պետական գույքի կառավարման կոմիտեի պետական գույքի տնօրինման վարչության պետի (ծածկագիր՝ 22-3-25.3-Ղ3-1) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար ացկացվող արտաքին մրցույթի (այսուհետ՝ Մրցույթ) հարցազրույցն անցկացնող հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 27-ի եզրակացությունը Մրցույթի հարցազրույցի մասնակիցների վերաբերյալ.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. ***Տիգրան Պարգևի Հակոբյանին*** 2022 թվականի հունիսի 29-ից նշանակել Պետական գույքի կառավարման կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) պետական գույքի տնօրինման վարչության պետի (ծածկագիր՝ 22-3-25.3-Ղ3-1) քաղաքացիական ծառայության պաշտոնում՝ տասներկու ամիս փորձաշրջանով:
2. Ամսական աշխատավարձը սահմանել [illegible] դրամ:
3. Տիգրան Հակոբյանի համար սահմանված փորձաշրջանի համակարգող նշանակել Կոմիտեի պետական գույքի կառավարման ծրագրերի և իրավական ակտերի մշակման վարչության պետ (ծածկագիր՝ 22-3-25.1-Ղ3-1) Բելլա Հակոբյանին:

ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ